ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017 – 2021 թ.թ. ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵԼ Է՝ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆԸ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.12.2016Թ.
ՆԻՍՏԻ ԹԻՎ 44-Ն ՈՐՈՇՄԱՄԲ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք----------2

Ներածություն----------3

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն, վերլուծություն և գնահատում----------4

2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում----------9

3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ----------10

4. Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում----------11

5. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի նպատակների առաջադրում, կոնկրետ խնդիրների ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում -------12

Եզրափակում----------21

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Սիրով ողջունում եմ Վարդաբլուր համայնքի բնակչությանը և բոլոր նրանց ովքեր հետաքրքրված են Վարդաբլուր համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով, այս հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումով, որոնք վեր են հանվել բազմաթիվ քննարկումների ընթացքում:

Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականացնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն անձանց, ովքեր կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի իրականացմանը, հասարակական կյանքի ակտիվացման գործընթացին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Վարդաբլուր գյուղական համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (ՀԶՀԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում, ՀԶՀԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը,
- համայնքի բնակչության թվաքանակը,
- համայնքում առկա ենթակառույցները և մատուցվող ծառայությունները
- համայնքում առկա վտանգները:

Ելնելով այն հանգամանքից, որ համայնքը փոքր է բնակչության թվաքանակով և ֆինանսական կարողություններով, համայնքի ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով և բոլոր ոլորտներում: Այդ պատճառով սույն ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները, որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ և միջոցառումներ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Համայնքի ղեկավարը և ավագանու անդամները ՀԶՀԾ-ի փաստաթուղթը մշակելիս հատուկ ուշադրություն են դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶՀԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀԶՀԾ-ի մշակման չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների կարողությունների վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀԶՀԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: Բաժնում ներառվել են նաև համայնքի ՈՒԹՀՎ վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին և արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶՀԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀԶՀԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶՀԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության, միջազգային և տեղական դոնոր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք 5 տարիների համար նախատեսվող հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, գործողությունները և միջոցառումները:

ՀԶՀԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ֆինանսական վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների՝ դիտարկելով նախորդ 2 և գալիք 5 տարիների եկամտային ցուցանիշները:

ՀԶՀԾ-ի 5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով համայնքի իրավիճակի գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ո հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակներից: Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀԶՀԾ-ում ներառվող ոլորտային ծրագրերը՝ օգտագործելով ծրագրի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք 5 տարիների:

ՀԶՀԾ-ի եզրափակումում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀԶՀԾ-ի իրականացման, մշտադիտարկման (մոնիթորինգի) վերահսկման և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման, ՀԶՀԾ-ում փոփոխությունների և լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀՏՈՒՄ

1.1 Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ

Վարդաբլուր գյուղը հիմնվել է 17-րդ դարի 70-ական թվականներին: Գյուղը գտնվում է Լոռու մարզի կենտրոնական մասում՝ մարզկենտրոնից 28 կմ դեպի հյուսիս, ծովի մակերևույթից 1320 մ բարձրության վրա: Կլիման ձմռանը մեղմ է, ամռանը՝ զով: Հաճախակի են անձրևաշատ տարիները (երաշտ հազվադեպ է լինում): Գերխոնավությունից հաճախ տուժում է դաշտավարությամբ զբաղվող գյուղացին: Գյուղը շրջապատված է լեռներով և անտառներով, չնայած՝ սկսած 90-ականներից անտառները նահանջել են: Գյուղի վարչական տարածքը կազմում է 2056.25 հա, որից վարելահողեր՝ 819.98 հա, խոտհարք՝ 146.67 հա, արոտավայր 250.13հա և այլն:

1.2 Ժողովրդագրություն

Համայնքի բնակչության թիվը կազմում է 1418 մարդ, այդ թվում տղամարդ՝ 713 և կանայք 705: Բնակչության տարիքային և սոցիալական կազմը այսպիսին է.

- 0-4 տարեկան - 73 մարդ
- 5-17 տարեկան -234 մարդ
- 18-62 տարեկան - 992
- 63 և բարձր - 119
- կենսաթոշակառուներ - 159
- հաշմանդամներ - 40
- աշխատունակներ - 850

Գյուղի 445 տնտեսություններից 116-ն ընդգրկված է "Փարոն" համակարգի ընտանեկան նպաստառուների ցուցակում:

1.3 Տեղական ինքնակառավարման մարմինները

2016թ. հոկտեմբերի 2-ին 1-ին անգամ համայնքի ղեկավար է ընտրվել Ռուսլան Սանասարի Օհանյանը: Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու կողմից (ընտրվում են հինգ տարին մեկ անգամ): Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, համայնքի հիմնախնդիրների լուծման համար Վարդաբլուր համայնքի ղեկավարը, համայնքի ավագանին իր 5 անդամներով նպատակալաց պետք է ծախսեն համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները, անհրաժեշտության և հնարավորության դեպքում միջոցներ հայթայթեն պետբյուջեից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից: Համայնքապետարանի աշխատակազմը ունի հետևյալ կառուցվածքը.

համայնքի ղեկավար – 1 միավոր, 204000 դրամ
ղեկավարի տեղակալ – 1 միավոր, 150000 դրամ
աշխատակազմի քարտուղար – 1 միավոր, 150000 դրամ
գլխավոր մասնագետ – 1 միավոր, 149000 դրամ
առաջատար մասնագետ – 2 միավոր, 110000 դրամ
հավաքարար – 1 միավոր, 77910 դրամ
աղբահանության գծով վարորդ - 1 միավոր, 72760 դրամ

Աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը 8 մարդ, 1 023 670 դրամ:

Համայնքում գործում է «նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ, որի աշխատակազմը բաղկացած է.

տնօրեն – 1 միավոր, 94000 դրամ
դաստիարակ – 1.25 մ իավոր, 115750 դրամ
երաժիշտ – 0.25 միավոր, 23150 դրամ
դաստիարակի օգնական – 1 միավոր, 77910
խոհարար – 1 միավո, 72760
բուժքույր – 0.5 միավոր, 46300 դրամ
հաշվապահ – 1 միավոր, 77910

«Նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թիվը 8 մարդ, 507780 դրամ:

1.4 Համանքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

_ Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ., թիվ 51 որոշմամբ:

_ Վարչական շենք - կառուցվել է անցած դարի 70-ական թվականներին, հիմնանորոգվել է 1997թ., մասամբ վերանորոգվել է 2014թ.-ին, ներկայումս նորոգման և կահավորման կարիք ունի:

_ Մշակույթի տուն - կառուցվել է անցած դարի 70-ական թվականներին, մասամբ նորոգվել է 1999թ. : Ունի հիմնանորոգման կարիք:

_ Նախկին մանկապարտեզի շենք - շենքային պայմանները բավարար են:

_ Բժշկական ամբուլատորիա - շենքը գտնվում է բարվոք վիճակում:

_ Ներհամայնքային նշանակության փողոցներ - գտնվում են անմխիթար վիճակում, ունեն բարեկարգման և ասֆալտապատման կարիք:
_ Գերեզմանատուն – ունի ցանկապատման կարիք:
_ ավտոմեքենա - գտնվում է անսարք վիճակում

1.5 Համայնքում գործող ոչ համայնքային կազմակեպությունները

Համայնքում կա արտադրական 1 միավոր՝
_ «Սերմնաբույծ» ՍՊԸ - գյուղմթերքների արտադրություն, աշխատողների թիվը՝ 27
Ծառայություններ մատուցող 1 միավոր
_ «Սամվել Օհանյան» ԱՁ - ալրաղաց
Համայնքում գործում է ոչ կառավարական կազմակերպություն՝
_ «համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» համայնքային հասարակական կազմակերպություն:
Համայնքում գործող քաղաքական կուսակցությունների մասնաճյուղեր չկան:

1.6 Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր (գոտիավորման նախագիծ, ընթացիք քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն):
Համայնքում աղբահանությունը կատարվում է կանոնավոր ձևով՝ ամիսը երկու անգամ, աղբահան տրակտորով:
Համայնքի միջով է անցնում Գարգար գետը, որի ափալվացման վտանգավոր հատվածներն ամրացված են երկաթբետոնե կոնստրուկցիաներով և գաբիոններով:
Դաշտապաշտպան անտառաշերտերն իսպառ վերացվել են անբարեխիղճ հողատերերի ոչ հետևողական գործունեության պատճառով: Հողի վերին հորիզոնների հողմնահարումից խուսափելու համար անհրաժեշտ է վերականգնել անտառաշերտերը:
Համայնքի բնակիչներն ապահովված են խմելու ջրի շուրջօրյա մատակարարումով, սակայն, ցանցի մաշվածության պատճառով, վթարները և դրանց հետ կապված ջրամատակարարման ընդհատումները հաճախակի են:
Համայնքը 90% - ով գազաֆիկացված է:
Համայնքում կա 2 գերեզմանատուն, որոնք ցանկապատված չեն, ինչի պատճառով անասուններն անարգել մուտք են գործում այդ գերեզմանատների տարածքը՝ առաջացնելով բնակչության արդարացի դժգոհությունը:

1.7 Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 360 առանձնատուն՝ 30 հազ. քառ.մ բնակտարածքով: Բնակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը 80 է, վագոն-տնակներում է ապրում 8 ընտանիք:
Սոցիալ-տնտեսական ցածր մակարդակի պատճառով տուն կառուցելը կամ նորոգելը դարձել է անհնարին:

1.8 Գյուղատնտեսություն

Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են կարտոֆիլի և ցորենի արտադրությամբ, անասնապահությամբ:
Չնայած այն բանին, որ վերջին տարիներին պետական աջակցությամբ տրվում են ցածր գներով ազոտական պարարտանյութ և դիզ. վառելիք, այդուհանդերձ արտադրանքի գինը շատ ցածր է և գյուղատնտեսությունը կորցնում է իր շահութաբերությունը:

2016թ.-ի հունվարի 1-ի դրությամբ համայնքի խոշոր եղջերավոր անասունների թվաքանակը կազմել է 677, այդ թվում կովեր՝ 293 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 478 գլուխ: Համայնքի մի քանի տնտեսություններ հաջողությամբ զբաղվում են նաև մեղվապահությամբ:

1.9 Առևտուր և ծառայություններ

Համայնքում գործում է առևտրի 7 կետ, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և շինանյութի վաճառքով: Նրանք բոլորն էլ հաշվառված են պետական գրանցման մարմնում: Առևտրի 7 կետերն էլ տեղակայված են քարե շինություններում:

1.10 Կրթություն

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, այն ունի շենքային բավարար պայմաններ, ապահովված է կենտրոնացված ջեռուցման համակարգով, խմելու ջրի մշտական մատակարարմամբ:
Դպրոցի աշխատակիցների թիվը 33 է, աշակերտներինը՝ 144:

Համայնքն ունի «նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ, որը գործում է Վարդաբլուրի միջնակարգ դպրոցի 2-րդ մասնաշենքի 1-ին հարկում: Մանկապարտեզ են հաճախում թվով 40 երեխա, աշխատողների թիվը՝ 8: Մանկապարտեզի խաղահրապարակը գտնվում է ոչ բարվոք վիճակում: Մանկապարտեզը գործում է անվճար հիմունքներով:

1.11 Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համյանքն ունի մշակույթի տուն, որը 1999թ. նորոգվել է համայնքի բյուջեի հաշվին: Մշակույթի տանը կա 130 նստատեղով դահլիճ, որը գտնվում է անմխիթար վիճակում: Այժմ այն ունի հիմնանորոգման կարիք: Նորոգումից հետո կկահավորվի խաղասենյակը, որտեղ երիտասարդները կանցկացնեն իրենց ակտիվ հանգիստը:

Համայնքում կա մարզադահլիճ, որը գտնվում է անբարեկարգ վիճակում:
Գյուղում գործում է 1876թ. կառուցված "Սուրբ Աստվածածին" եկեղեցին, որն ունի քահանա: Եկեղեցին չունի զանգակատուն:

1.12 Առողջապահություն

Գյուղում գործում է մեկ բժշկական ամբուլատորիա, որը կառուցվել է ՀՄԽՀ-ի կողմից 2001թ.՝ համայնքի 10% ներդրումով: Շենքը բարվոք վիճակում

է, ամբուլատորիան ապահովված է առաջին անհրաժեշտության բժշկական սարքավորումներով, ունի 10 աշխատող:

1.13 Համայնքի ուժեղ կողմերը

_ Համայնքն ունի մոտ յոթ տասնյակ բարձրագույն կրթությամբ մասնագետներ, որոնք կարողանում են կազմակերպել և իրականացնել կրթության ու դաստիարակության, սպորտային, մշակութային, շինարարական աշխատանքներ:
_ Գյուղից մեկ կիլոմետր դեպի հարավ կա խճաքարի հանք, որի հումքը կարելի է օգտագործել համայնքի կարիքների համար:
_ Գյուղում կա 19-րդ դարի եկեղեցի, 1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակին նվիրված հուշարձան, 6-րդ դարում կառուցված մատուռ, Կիկլոպյան ամրոց (XII-XIII դ.դ.), կանաչապատ գոտիով լճերի համակարգ, որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը և հովեկությունը գյուղում:
_ Համայնքում գործում է մեկ ալրաղաց, որից օգտվում են նաև հարևան գյուղի բնակիչները:
_ Գյուղում առկա գյուղատնտեսական տեխնիկայի ու գործիքների քանակը թույլ է տալիս գյուղատնտեսական աշխատանքները կատարել ժամանակին և ագրոտեխնիկական սեղմ ժամկետներում:

1.14 Համայնքի թույլ կողմերը

_ Ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը:
_ Խմելու ջրի ցանցի վատթարագույն վիճակը:
_ Ամուսնությունների և ծնելիության նվազումը բնակարանային ու սոցիալ-տնտեսական վիճակի հետ կապված:
_ Աշխատատեղերի անբավարարությունը:
_ Գյուղացու եկամուտների տարեցտարի նվազումը գյուղատնտեսական մթերքների սպառման ցածր գների հետ կապված:
_ Բնական աղետներից (հիմնականում՝ կարկուտից) գյուղացու անպաշտպանվածությունը, չնայած այն բանին, որ 2012թ-ին հատկացվել է 1 հակակարկտային կայանը:
_ Սարի թաղ կոչվող թաղամասում տրանսֆորմատորային ենթակայանի բացակայություն, որի պատճառով էլեկտրաէներգիան անբավարար է:
_ Համայնքում գիշերային լուսավորության համակարգի բացակայությունը:

1.15 Համայնքի հնարավորությունները

_ Մեծ աշխատուժի առկայություն:
_ Գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնարտադրությամբ զբաղվելու փորձ և կարողություն:
_ Ուղղակի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հնարավորություն:

1.16 Համայնքին սպառնացող վտանգները

_ Խմելու ջրի ներհամայնքային ցանցում հաճախակի վթարների պատճառով ցանքատարածքների ջրալվացումը (բերքի անհարկի կորուստներ), կեղտաջրերի ներթափանցումը ջրացանց (համաճարակային հիվանդությունների առաջացում և տարածում):

_ Տնտեսական ցածր մակարդակի հետևանքով հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունների պատճառով համայնքի բյուջեի եկամտային մասի թերակատարումը:

_ Վերջին տարիներին հաճախակի դարձած կարկտահարություններից գյուղատնտեսությանը հասցվող վնասները:

_ Գյուղացու նկատմամբ պետական հոգածության անբավարար մակարդակը՝ գյուղմթերքների իրացման հետ կապված:

_ Զբաղվածության ցածր մակարդակը, գործազրկությունը:

_ Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը, մասնավորապես՝ մանկապարտեզի և միջնակարգ դպրոցի հետագա լիարժեք գործունեությանը:

_ Սոցիալապես անապահով բնակչության օրստօրե ավելացումը:

2 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Համայնքի տեսլականն է՝

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային ու հոգևոր կյանքը, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր, գյուղատնտեսական մթերքների արտադրության կենտրոն:

Զարկ տալ գյուղատնտեսության զարգացմանը՝ մեծացնելով գյուղմթերքների արտադրության ծավալը:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է.

- Համայնքում անասնապահության զարգացում, անասնագլխաքանակի տարեցտարի ավելացում՝ անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով:
- Համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ նմակարդակով մատուցման միջոցով:
- Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում:
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում և ասֆալտապատում, գիշերային լուսավորության համակարգի լիովին անցկացում:
- Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով:

- Կեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում, ՏԻՄ-երի գործունեության թափանցիկություն, հրապարակայնություն և հաշվետվողականության աստիճանի հետևողական բարձրացում:
- Խեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի իրականացում, համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի, ելակետային քարտեզի, սեյսմաշրջանցման քարտեզի ստեղծում:

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման, մասնակցության կարգի մշակման և ընդունման, մասնակցության մեթոդների և ձևերի աստիճանական զարգացման միջոցով
- զարգացնել գյուղատնտեսությունը (դաշտավարություն և անասնապահություն) համայնքում:
- համայնքի բնակչությանն ապահովել շուրջօրյա ջրամատակարարումով՝ բացառելով սուր վարակիչ հիվանդությունների տարածումը ջրի միջոցով:
- կազմակերպել համայնքի բնակչության էլ ավելի հագեցված մշակութային և հոգեվոր կյանքը:
- նպաստել գյուղատնտեսական մշակաբույսերի կազմակերպված և անկորուստ բերքահավաքի անցկացմանը:
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների ասֆալտապատում և լիովին լուսավորում:

3 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Լոռու մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-2021թթ. նախատեսվում է հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները.

- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, դիզվառելիքի, թունաքիմիկատի, սերմացուի, գյուղացուն ձեռնտու պայմաններով գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով,
- համայնքի մարզադահլիճի վերանորոգում, որի շահագործմամբ հնարավորություն կստեղծվի ապագա սերնդի ճիշտ զարգացմանը,հարևան համայնքների հետ սպորտային տարատեսակ միջոցառումների անցկացմանը:

• մշակույթի տան կապիտալ վերանորոգում՝ նպաստելով համայնքի մշակութային կյանքի զարգացմանը, կիսյուրընկալվեն երաժշտական, պարային, թատերական խմբեր մարզկենտրոնի մայրաքաղաքից և այլ համայնքներից,

• առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակի բարելավում՝ պետական պատվերի շրջանակներում,

• աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքին գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար նախ անհրաժեշտ է գնահատել և կանխատեսել ֆինանսական միջոցները, այնուհետև շփվել միջազգային այնպիսի կազմակերպությունների հետ, որոնք նպատակ ունեն Հայաստանի Հանհապետությունում զարգացնել և ուժեղացնել գյուղական համայնքները: Վարդաբլուր համայնքն այս առումով՝ միջազգային նման կազմակերպությունների հետ շփման մեծ փորձ ունի. մի շարք ծրագրեր արդեն իրականացվել են նրանց հետ համա եղ (լճերի համակարգ, կանաչապատ գոտի, ալրաղացի կառուցում, գյուղատնտեսական երեք ծրագիր ՀՊԾ-ի հետ, մարզադահլիճի ներքին հարդարում ՓԵ-ի հետ, մարզահրապարակի կառուցում «Վորլդ Վիժն Հայաստան»-ի հետ և ուրիշներ):

Վարդաբլուր համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը

Հազար դրամ

	Եկամուտի տեսակը	2015թ. փաստացի	2016թ. փաստացի	2017թ. կանխատեսում	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում	2021թ. կանխատեսում
	Եկամուտների ընդամենը	32953.5	20499.9	30879.9	30879.9	30879.9	30879.9	30879.9
Ա	Հարկային եկամուտներ	7180.3	4603.4	8206.4	8206.4	8206.4	8206.4	8206.4
1	Հողի հարկ	4961.3	3490.5	5409.7	5409.7	5409.7	5409.7	5409.7
2	Գույքահարկ	1948.7	1112.9	2786.7	2786.7	2786.7	2786.7	2786.7
3	Գույքահարկ շենք, շինության	102.4		10.0	10.0	10.0	10.0	10.0

Բ	Տուրքեր	168.0	121.9	144.0	144.0	144.0	144.0	144.0
1	Տեղական տուրքեր	168.0	121.9	144.0	144.0	144.0	144.0	144.0
Գ	Ոչ հարկային եկամուտներ	1790.0	15274.1	1438.0	1438.0	1438.0	1438.0	1438.0
1	Պահուստային հողի վ.վճար	1740.0	852.5	1388.0	1388.0	1388.0	1388.0	1388.0
2	Գույքի վ.վճար	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0
Դ	Դոտացիա	20244.7	14421.6	19422.5	19422.5	19422.5	19422.5	19422.5
Ե	Տարեսկզբի ն ազատ մնացորդ	3738.457	500.5	1669.0	1669.0	1669.0	1669.0	1669.0

Աղյուսակ1. Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

5 ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ, ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա 5 տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, Կարդաբլուր համայնքի ավագանու կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 2)՝ ընդգրկելու համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում:

Աղյուսակ 2. 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ընդգրկելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը.

ՀՀ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը (հազար դրամ)
1	մարզադահլիճի վերանորոգում	7 000.0
2	մշակույթի տան վերանորոգում	20 000.0
3	ներհամայնքային ճանապարհների և փողոցների գիշերային լուսավորության համակարգի անցկացում	10 000.0
4	ներհամայնքային ճանապարհների նորոգում և ասֆալտապատում	60 000.0

5	գերեզմանատների ցանկապատում	3 000.0
6	հեղեղատարի բարեկարգում	5 000.0

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, համայնքի ավագանու կողմից սահմանվել է ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ազդեցությունը արտագաղթի կանխման վրա,
- համայնքի կարողությունների հզորացում,
- բնակչության սոցիալական պայմանների բարելավում:

ԾՐԱԳԻՐ – 1
ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարզադահլիճը, որը տեղակայված է դպրոցի տարածքում (դպրոցին կից) կառուցվել է 1999թ-ին համայնքի ուժերով: Մարզադահլիճի հատակը և ներկարարական աշխատանքները կատարվել են «ՓԵ» կազմակերպության օգնությամբ:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Մարզադահլիճի հատակի փայտյա կոնստրուկցիաները փտում են՝ վարակված են սնկային հիվանդությամբ: Մի անգամ «Վորլդ Վիժն» կազմակերպության միջոցներով հատակի մի հատվածը վերանորոգվել է, բայց ապարդյուն: Որպեսզի հետագայում ևս նման դեպքեր չկրկնվեն , որոշվել է կառուցել ռետինե ժամանակակից հատակ՝ նախատեսված հատուկ մարզադահլիճների համար բետոնյա ծածկույթի վրա: Քանի որ այստեղ պարապում են և՛ դպրոցի աշակերտները, և՛ ունենք արևելյան մարզաձևերի խմբակ, շատ կարևոր է մարզադահլիճի շուտափույթ վերանորոգումը: Մարզադահլիճը չունի նախագծա-նախահաշվային և շինարարական ավարտական փաստաթղթեր ու պետական գրանցման վկայական:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակներն են.

- կատարել պետական գրանցում,
- ունենալ բարձրակարգ մարզադահլիճ,
- ապահովել դպրոցի աշակերտների ֆիզկուլտուրա առարկայի դասավանդումը,
- ապահովել երեխաների ֆիզիկական կոփվածությունը,

Ծրագրի իրագործման խնդիրներն են.

- գտնել ֆինանսավորման աղբյուր՝ ծրագիրն իրականացնելու համար,
- ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացումը կնպաստի ապագա սերնդի ճիշտ զարգացմանը, երեխաները կմեծանան առողջ , կլինեն ուժեղ, հաճախակի կանցկացվեն մարզական միջոցառումներ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացնելու համար կպահանջվի մոտ 7.0 մլն. դրամ:

ԾՐԱԳԻՐ – 2
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մշակույթի տունը կառուցվել է 1970-ական թվականներին: Ունեցել է 300 նստատեղով դահլիճ: Երկրաշարժի ժամանակ մոտ 40%-ով շենքը վնաս է կրել: Հետագայում՝ 1999թ. մշակույթի տան սպորտդահլիճը, որն ավելի քիչ էր վնասվել, ձևափոխվել և դարձվել է 120 նստատեղով դահլիճ:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Քառասուն և ավելի տարվա վաղեմություն ունեցող շենքն ունի կապիտալ վերանորոգման կարիք: Տանիքի ազբոցեմենտյա թիթեղներով ծածկը ամբողջությամբ և փայտյա կոնստրուկցիաները 70%-ով ենթակա են փոխման: Պետք է փոխվի նաև դռներն ու պատուհանները: Կկատարվի հատակի վերանորոգման և հարդարման աշխատանքներ, ինչպես նաև դահլիճի կահավորում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակներն են.
- ապահովել համայնքի բնակիչների հանգիստը,
- կշատանան համերգային և թատերական ներկայացումները,
- համայնքի բնակիչները ավելի շատ կշփվեն մշակույթի հետ:

Ծրագրի իրագործման խնդիրներն են.
- գտնել ֆինանսավորման աղբյուր՝ ծրագիրն իրականացնելու համար,
- ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացումը կնպաստի համայնքի բնակչության մշակութային զարգացմանը, ազատ ժամանակը խաղասենյակներում անցկացնելուն: Համայնքում կազմակերպվող միջոցառումները կանցկացվեն մշակույթի տանը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացնելու համար կպահանջվի մոտ 30.0 մլն. դրամ:

ԾՐԱԳԻՐ – 3
ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներհամայնքային ճանապարհների երկարությունը 8 կմ է, որից 2 կմ կենտրոնական ճանապարհն է, որը 7 տարի առաջ ասֆալտապատվել է: Մնացած մոտ 6 կմ ճանապարհը գրունտա-խճաքարային են, որտեղ երկար ժամանակ կապիտալ վերակառուցում չի կատարվել: Յուրաքանչյուր տարի գյուղապետարանի կողմից մասամբ կատարվել են ճանապարհների վերանորոգման աշխատանքներ՝ հողային և խճապատման եղանակով, որը արդյունավետ չէ և ունի կարիք նորոգման և ասֆալտապատման:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագիրն իր մեջ ներառում է ճանապարհների կառուցում ավազախճային խառնուրդով և ասֆալտապատումով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է.

- ապահովել հետիոտնի և տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին,
- վերացնել ճանապարհների ջրափոսերը
- ասֆալտապատել կենտրոնական փողոց-դպրոց-բուժկետ, կենտրոնական փողոց-սարի թաղ-գերեզմանատուն տանող ճանապարհները:

Ծրագրի խնդիրները.

- գտնել ֆինանսավորման աղբյուր՝ ծրագիրն իրականացնելու համար,
- ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը,
- նախապատրաստել փողոցների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը շինարարական աշխատանքներն իրականացնելու համար:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացումից կօգտվեն համայնքի բոլոր բնակիչները: Կունենանք հարթ և չոր ճանապարհ և՛ մեքենաների և՛ հետիոտնի համար, կվերանան ջրափոսերը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի իրականացման համար կպահանջվի մոտ 60.0 մլն դրամ , որը կարող է կատարվել մաս-մաս, տարեկան որոշակի հատվածներով՝ ըստ ունեցած ֆինանսական միջոցի հաշվով:

ԾՐԱԳԻՐ-4
Ներհամայնքային ճանապարհների և փողոցների գիշերային լուսավորության համակարգի անցկացում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներհամայնքային ճանապարհների երկարությունը 8կմ է, որից 2կմ կենտրոնական ճանապարհն է մասամբ լուսավորված:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ներհամայնքային ճանապարհները չունեն գիշերային լուսավորություն, որը որոշակի վտանգ, անհարմարություն և դժվարություն է առաջացնում հետիոտնի և տրանսպորտային միջոցների համար: Փողոցների բարեկարգումից և ասֆալտապատումից հետո անհրաժեշտ է դրանք վերազինել գիշերային լուսավորության համակարգով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է.

- բարձրացնել ներհամայնքային և կենտրոնական փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը՝ դարձնելով դրանք լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, զբոսաշրջիկների և տրանսպորտային միջոցների համար:

Ծրագրի խնդիրները.

- ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը (ծրագրի արժեքի համապատասխանաբար 90% և 10% համամասնությամբ):
- պատրաստել ներհամայնքային բոլոր փողոցների, նրբանցքների և փակուղիների միակողմանի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ նախատեսելով մետաղյա հենասյուներ 4.5մ բարձրությամբ, 70մմ տրամագծով, իրարից 50մ հեռավորությամբ, յուրաքանչյուր հենասյան վրա 1 լուսային սարքավորում և էլեկտրահաղորդալարեր 10մմ հաստությամբ, 6կմ երկարությամբ:
- համագործակցել և կնքել պայմանագիր «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Դեբետ» մասնաճյուղի հետ՝ տրամադրելու փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքներն իրականացնող մասնագիտական խումբ:
- ձեռք բերել արտաքին լուսավորության համակարգի հենասյուները, լուսային սարքավորումները և էլեկտրահաղորդալարերը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փողոցները կդառնան լուսավոր, անվտանգ և գեղեցիկ՝ ինչպես համայնքի բնակիչների և տրանսպորտային միջոցների, այնպես էլ համայնքում հյուրընկալվող զբոսաշրջիկների համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի իրականացման համար կպահանջվի մոտ 10.0 մլն դրամ, որը կարող է կատարվել մաս-մաս, տարեկան որոշակի հատվածներով՝ ներառելով նաև ՀՀ կառավարությունից, հիմնադրամներից ու միջազգային կազմակերպություններից ֆինանսական աջակցություն ստանալու միջոցները:

ԾՐԱԳԻՐ-5
Գերեզմանատների ցանկապատում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի բաց գերեզմանատներ, որոնցից մեկն է ցանկապատված եղել բարակ մետաղյա ցանցով, սակայն տարիների ընթացքում այդ ցանկապատը ոչնչացվել է :

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ընտանի կենդանիները անարգել ներխուժում են գերեզմանատների տարածք և վնաս հասցնում շիրմաքարերին: Անհրաժեշտ է կառուցել հիմնական բետոնե հիմքով ցանկապատ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է.
- անհնարին դարձնել ընտանի կենդանիների մուտքը գերեզմանատուն,
- ապահովել շիրմաքարերի պահպանությունը և մաքրությունը

Ծրագրի խնդիրները.
- կազմել նախագծանախահաշվային փաստաթղթեր,
- ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը (ծրագրի արժեքի համապատասխանաբար 90% և10% համամասնությամբ):

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի գերեզմանատների պահպանություն, մաքրություն, շիրմաքարերի պահպանություն:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի իրականացման համար կպահանջվի մոտ 3.0 մլն դրամ: Ծրագրի իրականացման համար դիմել ՀՀ կառավարությանը կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու համար:

ԾՐԱԳԻՐ-6
ՀԵՂԵՂԱՏԱՐԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վերին հատվածով է անցնում խորհրդային միության տարիներին կառուցված հեղեատարը, որը ձգվու է համայնքի երկայնքով շուրջ 2կմ: Այն պաշտպանիչ գոտի է համարվում դաշտավայրերին կից գտնվող բնակարանների համար: Տարիների ընթացքում հեղեղատարը չմաքրելու հետևանքով քայքայվել և ամբողջովին դուրս է եկել շարքից:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվում է վերականգնել հեղեղատարի նախկին տեսքը, որը հնարավոր կլինի գրեթե նորովի կառուցելու միջոցով: Հեղեատարի կառուցումը խիստ անհրաժեշտ է ազգաբնակչության սեփականությունը հեղեղումներից ու սելավներից պաշտպանելու համար: Հաշվի առնելով, որ գարնան ձնհալն ու անձրևները թափանցում են բնակիչների տներն ու նկուղները, հեղեղում տնամերձ հողատարածքները, այդ իսկ պատճառով, ընդառաջելով և հաշվի առնելով բնակչության խնդրանքը, անհապաղ կարիք է առաջանում հեղեղատար առուների բարեկարգման:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է.

- ապահովել բնակչության անվտանգությունը՝ առաջացած հեղեղներից պաշտպանելու համար,
- հետագա աղետներից պաշտպանել գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, շենքերը, շինությունները:

Ծրագրի խնդիրները.

- կազմել ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթեր,
- ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կասեցնել հետագա աղետները, բարձրացնելով գյուղացու անվտանգության մակարդակը, փրկել անասնագոմերը, տները, նկուղները հեղեղումներից:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի իրականացման համար կպահանջվի մոտ 5.0 մլն դրամ, որը կարող է կատարվել մաս-մաս, տարեկան որոշակի հատվածներով:

Բացի վերը նշված ծրագրերից համայնքում կան նաև այլ հիմնախնդիրներ, առավել կարևոր են՝

- Համայնքապետարանի վարչական շենքի տանիքի վերանորոգում,
- Ոռոգման ցանցի վերանորոգում,
- «Սուրբ Աստվածածին» եկեղեցու զանգակատան կառուցում,
- Համայնքի դեպի սարի թաղ տանող կամրջի վերանորոգում,
- դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում,
- մանկապարտեզի խաղահրապարակի բարեկարգում

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2017-2021թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ըստ ամենայնի աջակցել համայնքում գործող գյուղմթերքներ արտադրող ընկերությանը՝ աստիճանաբար ընդլայնելով գյուղմթերքների արտադրման ծավալները և ավելացնել աշխատատեղերի քանակը,
- համայնքում խթանել անասնապահական, թռչնապահական և մեղվապահական մթերքների արտադրության, հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը,
- համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր և միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկումը՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,
- համայնքում դնել էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծման հիմքերը՝ ապահովելու զբոսաշրջիկների գիշերակացը տնային պայմաններում, հասարակական սնունդը, սպասարկումը, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցումը,
- աստիճանաբար բարեկարգել և ասֆալտապատել ներհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել գիշերային լուսավորության համակարգեր, տեղադրել ճանապարհային նշաններ՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը,
- կարեկան 2 անգամ կազմակերպել համայնքի գործարարների հանդիպումներ, կլոր-սեղան քննարկումներ, ցուցահանդես-վաճառքներ, փորձի փոխանակման և այլ միջոցառումներ:

Համայնքի տարածական զարգացումը սահմանող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման մասին դրույթներ

Քանի որ համյնքը չունի իր տարածական զարգացցումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (գլխավոր հատակագիծ, գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն), իսկ այդ փաստաթղթերի նախագծման պատվիրատուն համայնքն է, 5-ամյա ժամանակահատվածում նախատեսվում է համագործակցություն ծավալել Հայաստանում գործող նախագծային ինստիտուտների հետ՝ կազմելու համայնքի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների նախահաշիվը: Համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախահաշվային արժեքը հաշվարկելուց հետո միջոցներ կձեռնարկվեն՝ հայթայթելու պահանջվող գումարը ֆինանսավորման արտաքին աղբյուրներց, քանի որ համայնքի բյուջետային միջոցների ներկայիս սուղ վիճակն առայժմ թույլ չի տալիս կատարել նմանատիպ ծախսերը համայնքի բյուջեից:

Համայնքի համար անչափ կարևոր այս հարցի լուծման այլընտրանքային տարբերակ է դիտարկվում մոտ ապագայում Հայաստանում ծրագրվող վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում խոշորացվող համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծումը, քննարկումը, հաստատումը և կիրառումը՝ խոշորացվող համայնքի բյուջեր միջոցների հաշվին:

Աղետների ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ

Համայնքում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված՝ 2017-2021թթ ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և համայնքում առկա ռեսուրսների բացահայտում, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքային միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը,
- համյքնի խոցելիության և կարողությունների գնահատում, ներառյալ այդ գործընթացի կազմակերպման և իրականացման խմբի ձևավորմանը, նախապատրաստական աշխատանքները, տվյալների հավաքագրումը և հետազոտումը՝ համապատասխան գործիքների և մեթոդների ընտրության, վերլուծական աշխատանքների իրագործումը՝ յուրաքանչյուր փուլում ձեռնարկվող քայլերի և ակնկալվող արդյունքների ամրագրմամբ և ձևակերպմամբ,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման գործողությունների և միջոցառումների պլանի կազմում և իրականացում,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համաձայն տեղական ինքնակառավարման բնագավառի ՀՀ օրենսդրության, ՀԶՀԾ-ն հանդիսանում է համայնքի գալիք 5 տարիների բյուջեների ձևավորման ծրագրային հիմքը: ՀԶՀԾ-ում 2017-2021թթ համար նախատեսված ոլորտային ծրագրերը, համայնքային ծառայությունները և միջոցառումները հիմք կհանդիսանան համայնքի այդ տարիների բյուջեների կազմման, ընդունման և իրականացման համար: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը կհանգի հիմանականում համայնքի գալիք 5 տարիների բյուջեների մշակմանը և կատարմանը: Հետևաբար, համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն ամբողջական ծավալով իրականացման հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա 5 տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար և արդյունավետ ծախսումից:

ՀԶՀԾ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև այն բանից, թե համայնքի ՏԻՄ-երի ինչքանով կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների, գործող միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, անհատ գործարարների հետ՝ համայնքային տնտեսությունում ապահովելու ՀԶՀԾ-ով պլանավորված ներդրումները և միջոցները:

ՀԶՀԾ-ում կան տվյալ տարվա բյուջեում ներառված ծրագրերը կամ ծառայությունները պատշաճ մակարդակով իրականացնելու համար նախատեսվում է, որ յուրաքանչյուր ծրագրի կամ ծառայության համար կսահմանվեն և կգնահատվեն դրանով նախատեսված աշխատանքների կատարման որոշակի ցուցանիշներ, որոնց միջոցով էլ մոնիթորինգի կենթարկվի և կգնահատվի տարեկան առաջընթացը ՀԶՀԾ-ով սահմանված՝ համայնքի միջնաժամկետ նպատակներին հասնելու գործում:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համապատասխանաբար համայնքի ղեկավարը և ավագանին: ՀԶՀԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Համայնքի ղեկավարը, մինչև ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ 5-ամյա հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնելը, կկազմակերպի և կանցկացնի դրա աշխատանքային և հանրային բաց քննարկումներ 15-օրյա ժամկետում՝ այդ մասին իրազեկելով համայնքի բնակչությանը, համայնքում գործող պետական, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների կազմակերպությունների, շահագրգիռ այլ անձանց: Համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ 5-ամյա հաշվետվությունը, դրա հանրային քննարկումների ժամանակ համայնքի հանրությունից ստացված և ընդունված դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ տեղեկանք և կից այլ փաստաթղթերը, օրենքով սահմանված կարգով, կներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը:

Համայնքի ավագանին ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան կամ 5-ամյա հաշվետվությունը կքննարկի օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով և կկայացնի համապատասխան որոշում:

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր կամ համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները, օրենքով սահմանված կարգով, ներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը: